

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 ՄԷՃ.
Գաւառացի 2 Լիր
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 ՄԷՃ.
Գաւառացի 1 Լիր
Ստոր երկիրներու 50 Զր.
Շանուղման տուր մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :

Խրաքանչիւր թիւ 40 փարա արծ:



ԼՐԱՊԵՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անգղիոյ մէջ խորհրդարանն հա-
զիւ թէ փակեցաւ և ահա երկու
կուսակցութիւնք՝ կոչուեցներու, մի-
թիւններու և ընտրական գումար-
մանց մէջ իրենց սովորական կռիւնե-
րն սկսան աւելի սաստիկ կերպիւ :
Պատերազմի նշանն արդէն նախա-
բարձր տուած էին խորհրդարանին
փակելէն քիչ ժամանակ առաջ, և
այժմ կարգէն ազատականաց եկած ի-
նչ կը թուի : Վերջերս Պ. Կլաւսթօն
Չէսթըրի և Սըր Չարլզ Տիլք Չէսթի
մէջ՝ միեւնոյն գիշերն երկար բանախօ-
սութիւններ ընելով՝ Լորտ Պիքօնս-
ֆիլտի նախարարութեան աշխարհա-
վարութիւնը քննադատեցին : Թայմզ
կը կարծէ թէ պահպանողականք ի-
րենց հակառակորդներէն ետ չպիտի
մնան, և հետևաբար երկու կուսակ-
ցութեանց միջև խորհրդարանին
նիստերուն ժամանակին չափ սաստ-
կութեամբ պիտի շարունակեն :

Պ. Կլաւսթօն՝ ի մէջ այլոյ՝ կամ-
բաստանէ Անգղիոյ արդէն նախարար-
ները թէ անխոհեմ՝ թշնամութեամբ
մը Ռուսիոյ խողը խողացած են, և
նոր շահուց ծառայած են, անոր եր-
կիրն ընդարձակած են, Ռուսիոյ զին-
ւորական պատիւ ստանալուն և Արեւ-
ելից քրիստոնեայ ժողովրդոց հա-
մակրութիւնը գրաւելուն պատճառ-
եղած, և Անգղիոյ վերապահել հարկ
եղած դիրքն անոր տուած են : Ազա-
տութեան ու արդարութեան շահե-
րը պաշտպանել մեզ անկ էր, կը-
սէ Պ. Կլաւսթօն, բայց Լորտ Պիքօնս-
ֆիլտի նախարարութիւնը թողուց որ
այդ շահուց պաշտպանութիւնը Ռու-
սիա ստանան : Պ. Կլաւսթօն կը խոր-
հի թէ Լորտ Պիքօնսֆիլտի նախարա-
րութիւնն իւր խօսքերովն ու գոր-
ծերով Անգղիոյ ժողովրդեան առջև
լինելով, ժողովրդեան կը վերաբերի
այժմ դատել թէ պէտք է արդեօք
որ յառաջիկայ ընդհանուր ընտրու-
թեանց մէջ այդ նախարարութեան
վրայ վստահութիւն ցուցնէ : Պ. Կը-
լաւսթօն չկարծեր որ Անգղիոյ ժո-
ղովրդէն հինգ ու կէս տարուան
փորձառութենէ ետև աշխարհ գոհ
լինի արդէն կառավարութենէն, որ
հաճի այսուհետև գործոց գլուխը
պահել զայն : Լորտ Պիքօնսֆիլտ,
Լորտ Սալիսբըրի և Սըր Սթաֆօրտ
Նօթթըֆօթ ոչ ևս պատասխանատու են
իրենց գործոց համար. եթէ ժողո-
վորդն անոնց վրայ վստահութիւն
յայտնէ, պատասխանատուութիւնը
ժողովրդեան կը պատկանի : Բայց Պ.
Կլաւսթօն հաստատապէս կը յուսայ
որ յաջողութիւնն ազատականք պի-

տի վստակին, ոչ թէ իբրև հակառա-
կորդ կուսակցութիւն մը, այլ որով
հետև անոնց յաջողութիւնն Անգղիան
ամենամանր վստակներէ և դժբաղ-
դութիւններէ պիտի ազատէ, ժողո-
վրդեան զարգացմանը նպաստաւոր
բարեկարգ վիճակ մը պիտի հաստա-
տէ, և ազատականք բոլոր քաղաքա-
կիրթ աշխարհի մէջ խաղաղութիւնն,
արդարութիւնն ու ազատութիւնը պի-
տի պաշտպանեն, ոչ թէ ապօրէն՝
այլ օրինաւոր միջոցներով :

Պ. Կլաւսթօն Կիպրոսի գրաւումը
պարտաւեց : Քանի որ Լորտ Տէրպի
և Լորտ Բարնարդին արդէն նախա-
բարութեան անգամ էին, ըսաւ, ես
թէ և իրենց հետ շատ կէտերու մա-
սին կարծեաց անհամաձայնութիւն
ներ ունէի, այսու ամենայնիւ գէթ
այն ժամանակ Անգղիոյ սահմանադ-
րութեան սկզբունքները կը յարգուե-
ին, կառավարութիւնն օրինաւորու-
թեան սահմանէն դուրս չէր ելնէր,
զաղտնի գործեր չէր տեսներ : Բայց
երբ այդ երկու աշխիւ լրտները նա-
խարարութենէն քաշուեցան, կառա-
վարութիւնը խել մը պարտաւելի գոր-
ծեր կատարել սկսաւ, որոց ամենա-
վտանգեղաւ Կիպրոսի անօգուտ դը-
րաւումն, որոյ վրայ դրուած բոլոր
յոյսերն ի դերև ելած են : Ի՞նչ է
Կիպրոս, կը հարցնէ Պ. Կլաւսթօն.
« Գործ կըլլի մը, բայց մեծ խաբէու-
թիւն մը » :

Պ. Կլաւսթօն Անգղիոյ երմտական
վիճակին նկատմամբ ալ կառավարու-
թիւնը պարտաւեց : Մինչդեռ աղա-
տական նախարարութիւնը վեց տարի
առաջ պիւտտէին վրայ քանի մը մի-
լիոն ոսկի յաւելուած ունէր, այժմ
բոլոր այդ յաւելուածներն ուղաւերէ
ետև վեց միլիոն ոսկի բաց կայ, որ
մինչև երմտական տարւոյն վերջը
տան միլիոնի պիտի հասնի : Միւս
կողմէն Պ. Կլաւսթօն կը դատաւար-
տէ Լորտ Պիքօնսֆիլտի նախարարու-
թեան բոլոր այն ձեռնարկներն՝ որք
այս աստիճան ծախք պատճառած են :

Սըր Չարլզ Տիլք ալ իւր բանա-
խօսութեանը մէջ Կիպրոսի և մաս-
նաւորապէս Անկլո-թուրք պայմա-
նագրին վրայ խօսելով, փորձ-Ասիոյ
մէջ բարենորոգմանց տակաւին գոր-
ծադրուած չլինելն յիշեց, և սա հե-
տաքական գաղափարն յայտնեց թէ
քանի որ պայմանագրին արդէն մէկ
կէտի վրայ պայմանական է, այսինքն
քանի որ Անգղիա յայնժամ միայն պի-
տի պաշտպանէ փորձ-Ասիան, երբ
Օսմանեան կառավարութիւնը խոս-
տացած բարենորոգումները գոր-
ծադրած է փորձ-Ասիոյ մէջ, այդ-
պայմանագիրը թող երկրորդ կէտի մը
վրայ ալ պայմանական լինի, այսինքն,
ըստ որում Կիպրոսի եկամտէն Անգ-
ղիական կառավարութիւնը տարին
100,000 ոսկի պիտի վճարէ Թուրք

կառավարութեան, մինչև որ Թուր-
քիա փորձ-Ասիոյ մէջ խոստացեալ
բարենորոգումները չգործադրէ, այդ-
100,000 ոսկի տարեկան գումարը չը
տրուի իրեն : Սըր Չարլզ Տիլք պաշ-
տօնական անձ մը չէ, բայց իւր գա-
ղափարն ուշադրութեան արժանի է,
որովհետև կը ցուցնէ թէ բարենո-
րոգմանց յապաղման համար դըրա-
մի չգոյութեան իբրև առարկութիւն
գործածուիլը բաղձալեալ աղբեցու-
թիւնը չընէր Եւրոպիոյ հասարակայնի
կարծեաց վրայ, որ համոզուած է թէ
Թուրքիոյ պէտք ունեցած բարենո-
րոգմանց մէկ մեծ մասն առանց
դըրամի և պարզապէս յօժարակամու-
թեամբ և քիչ մը հաստատամտու-
թեամբ ալ կրնայ գործադրուի :

Սըր Չարլզ Տիլք Լորտ Պիքօնսֆիլ-
տի նախարարութեան Արեւելեան աշ-
խարհավարութեան վրայ խօսելով,
իբրև յաջողութիւն հռչակուած շատ
մը կէտերը քննադատեց. և ըստ ու-
րում Պուլլարիոյ երկու մասի բաժա-
նում և Պարքանայ վրայ Օսմանեան
զօրք դնելու որոշումն Անգղիական
գիւղական իրավութեան ամենամեծ յա-
ջողութիւնը կը համարուէր, այդ ո-
րոշման տկարութիւնն ու անգործադ-
րելիութիւնը բացատրեց : Ըստ Սըր
Չարլզ Տիլքի, մեծ Պուլլարիա մ'ա-
ւելի անկախ կը լինէր Ռուսական աղ-
ղեցութենէն, քան այն երկու փոքր
իշխանութիւններն որք կազմուած են,
և որոյ մին թէև ինքուհաշիւ ճա-
ռելի մէջ « Արեւելեան Բոսնիոյ (Օս-
մանեան նահանգը » կոչուած է, Սըր
Չարլզ Տիլք կը կարծէ թէ այս խօսքն
այնքան հակառակ է ճշմարտութեան,
որքան եթէ « Թիմարլու Օսման-
եան նահանգ » ըսուէր Լորտ Պի-
քօնսֆիլտ Լորտերուն ժողովին մէջ
յայտարարեց թէ Պիքմարք իշխանը
Պուլլարիոյ երկու մասի բաժանման
և Պարքանայ Օսմանեան զօրքէ դը-
րաւման առաջարկն ընդունուելէ ետև
ըսած էր իրեն թէ « Թուրքիա Եւրո-
պիոյ մէջ մի անգամ ևս գոյութիւն
ստացաւ » : Արդ, ըստ Սըր Չ. Տիլքի,
կա՞մ Պիքմարք իշխանը Լորտ Պիքօնս-
ֆիլտի քթին խնդացած է և կամ
Լորտ Պիքօնսֆիլտ Լորտերուն ժողովը
խաբած է. որովհետև Պարքանային
Օսմանեան զօրք երբեք չպիտի կրնայ
երթալ, և Անգղիոյ նախարարք իսկ
անցեալ տարի վեհաժողովէն յետոյ
ըսած լաւատես յայտարարութիւն-
նին այժմ չպիտի կրնան կրկնել :

Ռուսական Պէրլիի գաշնագրին իւր
քմայ համեմատ գործադրեց, և Սըր
Չարլզ Տիլք կը հարցնէ թէ « Պէ՞տք
որ անվոյթ կենտմը և Պէրլիի գաշ-
նագրին բռնաբարութիւնը ընդունվի »
երբ բռնաբարութիւնը Ռուսիոյ շահուց

ՊԱՅՄԱՆՔ

Գուրն պնացած քաղաքացի Կ. Պոլսոյ
ժախքը խորհրդութեան վրայ է :
Լրացուցաւ փերաբեքեալ շինակ
կամ որ և ինչ գրութիւն խորհրդի
— Տնօրէնին պիտի ուղղուի, Ղալաւ
ձիա Սանտրքըրտը ճառագայթի թիւ
198, Կոստ խան, Մասիսի գրասեն-
եային :
Հանրաժողովը չվճարուած նա-
մակ լրացուցաւ :
Չարքանայ նամակ, յողում, եւ
էս չէն արդի :

նպատակաւ կը լինի, իսկ այդ գաշ-
նագրին ի նպաստ Հայոց և Յունաց
պարունակած տրամադրութեանց ան-
գործադրութեանը վրայ հոգ չը-
նեմը :

Սըր Չարլզ Տիլք չկարծէր թէ Պէր-
լիի վեհաժողովը Անգղիոյ համար
յաջողական մ'եղած լինի : Վեհաժո-
ղովոյ ըրած արամադրութեամբն
Անգղիա իւր կողմէն հաստատութիւն
տուաւ երբեք կայսերաց միմիկ համա-
ձայնութեան. որովհետև Ռուսիա
կարող, Պաթմալը, Պետրապոլիան և
Դանուբի բերանն առաւ. Ալբա-
նիա Պոնտի և Հէրսէնքն խաղաղ, և
Գերմանիա ալ Աւստրիոյ մինչև Սէ-
լանիք տարածուելով Արեւելեան պի-
տութիւն մը լինելու հաւանակա-
նութիւնը ձեռք բերաւ, որ ժամա-
նակ Աւստրիոյ Գերմանական գաւառ-
ներն ալ Գերմանիոյ հետ կրնան մի-
անալ : Գաղղիա Եգիպտոսի մէջ իւր
աղղեցութիւնն աւելցուց և Յունաս-
տանի երախտագիտութիւնը վատոր-
կեցաւ, մինչդեռ Անգղիոյ բաժինն
եղաւ Կիպրոսի վարձակալութիւնն և
Աֆղանստանոյ անօգուտ պատերազ-
մը :

Կիպրոսի աւելի խափուտորի Ս.
Խաչ եկեղեցւոյ գէպքն և անոր հե-
տևանքը քանի մը խորհրդածութիւն
կը ներշնչէ մեզ : Խեղիքը ճերմակ
եան անուն կրօնաւորի մը պատճա-
ռաւ ծագում առած է. այս վար-
դապետն որ գրեթէ յիսուս տարին
հասած է տաւանց նշանաւոր գործ-
մ'ունենալու, առանց աղբիւն կո-
րեւոր ծառայութիւն մ'ընելու, յան-
կարձ ախար համբաւ մը կ'առնայ
խափուտարու Սէլամիէ թաղը քանի
մ'ամիս քարոզչութիւն ընելէ վերջը :
Իւր անցեալը բոլորովին անձնօթ
է մեզ, բայց կրօնական ժողովը կ'ե-
րեւի որ առանց զայն քննելու և ա-
ռանց փորձելու, բազմամորթ Հոյ
թաղի մը քարոզչի կ'անուանէ, ուր իւր
ուովութեան և գաղթականութեան ա-
ռիթ կը լինի : Անձնականութիւնն ի
բաց կը թողուի, բայց կը հարցը-
նենք թէ այսպիսի նորեկ և անձա-
նօթ անձ մը կրնա՞ր կատարեալ վըս-
տահութեան արժանի լինիլ, և թէ
ի՞նչ երաշխաւորութիւն կար զայն
անմիջապէս պաշտօնի կոչելու : Մեզ
կը թուի թէ կրօնական ժողովը նա-
խատեսութեան ամենապարզ սկզբ-
բունքն չէ յարգած : Ո՞ւր է ճեր-
մակեանի սկզբանց կամ գաւառնու-
թեան յայտարարութիւնն. ի՞նչ հը-
րատարակութիւն ըրած է աղբային
եկեղեցւոյ կամ անոր իրաւանց պաշտ-
պանութեան համար : Սկզբունքն ու
զգացումներն անձնօթ անձ մը կը-
րօնական ժողովոյ կողմէն քարոզչու-
թեան կը կոչուի, և միմիկ այսպիսի

* Կերպրոսական Արիֆիէի մէջ Ռուսու-
նի երկրորդ կը գտնուի : Գ. ի.

կատարած իր անձանց տուժանք ընդունելու և անհատական իրավունքները պաշտպանելու իրավունքը չի ստացել։ Կրթական ժողովը պետք է որ նաև ընդունի իր իրավունքները, և միանգամայն Ս. խաչի թաղեցուց ու մանց յուզման առաջին առնչությամբ քաղաքական իրավունքները կամ ուրիշ և կեղծելի փոխադրությունները սրտում տար։

Այսու ամենայնիւ կերակր առուր դէպքերն հեղինակները ընտել են կրթական արդարամաս, և կատարած կուտան նաև թէ օտար և թշնամի մատ մը կայ այս գործին մէջ՝ Հայոց Սահմանադրութիւնը, սահմանադրական ժողովներն և վարչութիւնն և մինչև իսկ եկեղեցին տապալելու և դժարութիւնները գոցելու համար, քանի մը անձինք կը յանդգնին Եփեսոսիական ցոյցեր ընելու, եկեղեցւոյ բարեկարգութիւնը խանգարելու, օրինաւոր ժողովներ ջրուելու և անպատժութիւնը դիմելու կը քաջալերէ։ Այսու հետեւ ամեն ամբաստանեալ եկեղեցական կամ ժողովական կրնայ քանի մը կուտակից գանձերով ազդէն մէջ խռովութիւն հանել և փութ կամքն յառաջ տանի։

Այս դէպքն իրաւունք կուտայ պահանջելու, որ այսուհետև չիրանկեան թէ՛ իւր դատը վստակի կամ կորուսանէ, իսկառ հեռանայ իւսելի հեռաւորութեամբ շարժի իւր ընտրութեանց մէջ, մանաւանդ իրենց անդերադիմ, սկզբունքային և վարուք անձանցով կատարած իր անձանց պաշտօն չտայ։

Ժամանակէ մ'ի վեր մեր կրօնապէս բաժանեալ ազգայնաց մէջ նըշանակութեան արժանի շարժում մը կը տեսնուի։ Այսպիսի անձինք, որք քանի մը տարի առաջ Հայութեան վրայ արհամարհանօք կը նայէին, Հայերէն լեզուն փտարած էին իրենց ընտանեաց և ընկերութեանց մէջէն և Հայութեան հետ 'ի միասին ազգային գրադարմբ բարոյական մերժած էին, մտերմ մեկէն 'ի մէկ կը զննան իրենք դիրքեր Հայ անուանել, և Հայերէն խօսիլ։ Գուցէ կը յուսանին երբեմն օտար ազգայնութեանց շնորհիւ բարձր Հայութիւնը կերպարանափոխել և իրենց փարախը ձգել, սակայն երբ տեսան որ ազգին մեծագոյն մասն հատաւ կը կենայ իւր աւանդութեանց վրայ, և եւրօպայ մեծամասնութեան իրաւունքը կը յարգէ, թերեւս այժմ Հայութիւնն որսալու փորձեր կընեն ազգային ըզգացումը փաղաքելով։ Անշուշտ այս փորձն ալ 'ի դերն պիտի ելնէ։ Բայց ոչինչ նուազ պարտականութիւն մ'է աշարջութիւն հրաւիրել այսպիսի հաւանականութեանց վրայ, որոց գործիք կընան լինիլ ինքնակոչ ազգապետներ։ Ասոր համար պէտք է որ կրօնական ժողովն անպատեհ կարեւորութիւն մը տայ այնպիսի կըղերական վերադարձներու, որք երկը վարդապետաց վերադարձն պէս հանդիսաւոր չեն։ Կաթոլիկ եկեղեցականաց մէջ կան անշուշտ օգտակար անձինք, բայց կան նաև որ ամեն աշխարհական կրկն մէջ կը թաւալին, շարունակ տեղութեան գուռները կը դեգերին իւր դիւանագէտ կամ վստատարան, և իրարու դէմ կը մրցին մեքենայութիւններ նիւթելու համար։ Այսպիսիներն Հայաստանեայց եկեղեցւոյ պարզութիւնն ու համեմատութիւնը բողբոջող կորուսած են, և փափաքելի է որ ազգին մեծամասնութեան մէջ մտնելով ժողովուրդը յուզեն և բարեկարգութիւնը չը

փոխեն, մանաւանդ որ Սահմանադրութիւնն յարգելու ալ վարժուած չեն, և ինչպէս ձերբակրան փորձով հաստատեց, մեքենայութիւններն ու խռովութիւնները կը սիրեն։ Ուստի որչափ և փափաքելի լինի ազգային միութիւնը, ձերբակրանի դէպքը պէտք է որ մեր աշարջութիւնն ու հեռաւորութիւնն աւելցնեն։

ՀԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս ամսու հոգի հետքերը
Պէրլին 2 սեպտ.
Ազգայնադր կայսեր հետ Ալեքսիմ կայսեր տեսակցութիւնն Ալեքսանտրովի (°) մէջ տեղի պիտի ունենայ վաղը։

Բեդրասովի 2 սեպտ.
Բեդրասովի լրագրող Ռուսիոյ գահաժառանգ իշխանին Դուքոս Երաժ ուղեւորութեանը վրայ խօսելով՝ կըսէ թէ անոր Սթոքհոլմ այցելութիւնն տար պարզապէս քաղաքականութեան համար է, թէ Ռուսիա իւր հիւսիսային զրացեաց հետ բարեկամական յարաբերութիւններ ունենալէ գոհ է։ Բայց ոչ նուազ եռանդեամբ կը փափաքի Գերմանիոյ հին բարեկամութիւնը պահպանել ու ամրապնդել։

Ալեքսիմ 2 սեպտ.
Ձրոյց կը պտըտի թէ ամսոյ 14ին Պիզմարը իշխանն հաս պիտի գայ։
Հոտ 2 սեպտ.
Կարիպտոսի դրամալը Բափրէյա վերադարձաւ։

Լոնտոն 2 սեպտ.	
Օտ. Բոն.	11 3/8
Փո. 1863	14 1/2
» 1869	13 3/8
» 1871	54 3/4
» 1872	21 3/4
» 1873	12 1/2
» Կ. իւր.	72 1/4
Անգլ. Բոն.	97 1/4

Փարիզ 2 սեպտ.	
Օտ. Բոն.	11.53
Փարիզ. Բոն.	50/0 35.77 1/2
» » » Նոր	35.72 1/2
» » » 50/0	117.40

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Երէկ մայրաքաղաքի Պանքաներուն տնօրէններն և գլխաւոր սեղանաւորները Բ. Դուռն երթալով՝ փոխառութեան խնդրոյն վրայ խորհրդարանից Լոնտոնի նախարարին հետ

Այսօր թուրք-Հնդկական յանձնախումբին իւր երկրորդ նիստը պիտի ընէ Գանդիմ Սաֆիէթ փաշային ապարանքը։ Հեղին պատուիրակներն Աթէնքէն եկած հրահանգաց համեմատ պատասխան պիտի տան երկրորդ նստին մէջ Սաֆիէթ փաշայի ըրած յայտարարութեան։

Բ. Դուռն իրաւագիտական խորհրդական Պ. Բարնիսի և Պ. Թարէնի երկրորդ կարգի Օսմանիէ պատւանշան տրուեցաւ։

Ինչպէս որ մեր նախընթաց աւուր թուով ծանուցած էինք, Վսեմ Արախան փաշան երէկ Եգիպտոսէն մայրաքաղաք վերադարձաւ։

Միջերկրական ծովու Անգլիական նաւատորմին ընդհանուր հրամանատար Հորնպի ծովապետը քանի մը սպայից հետ նախորդ իրիկուն մայրաքաղաք ու եկաւ և Թարապիս Անգլիական զեապանատունն իջաւ։

Մեր երէկուան թուով ծանուցինք թէ մայրաքաղաքի անգլիական դեսպան Սըր Հենրի Լէյքը եւ

ընք շարաւիթի համար հրաժեշտ տալով լինելով, 'ի մատոյ Միջերկրական ծովու ուղեւորութիւն մը պիտի ընէ։ Մօնիթէօր տիւ Բօմբէյ լրագիրը կըսէ թէ Ն. Վսեմութիւնն իւր տիկնոջ հետ տան օրէն դեսպանատան շողենալով Պէրլին պիտի երթայ, և քանի մը շաբաթ Սուրիա պիտի բնակի։

Մայրաքաղաքի Անգլիական դեսպանատան առաջին քարտուղար Պ. Մէլթ, որ անցեալ տարի Ռուսիոյ խնդրոյն մէջ կարեւոր դեր մը խաղացած է, և որ ժամանակէ մ'ի վեր հրաժեշտելու Լոնտոն կը գտնուէր, Եգիպտոսի Անգլիական ընդհանուր հիւպատոս և գլխաւոր իտական գործակալաւոր անուանեցաւ փոխանակ Պ. Վիլիամսի։ Պ. Մէլթ անցեալ շաբաթ Լոնտոնայէն Եգիպտոս դնաց։

Արեւելեան Ռուսիոյ մէջ տեղական զինուորական սպայներէն 16 հոգի կոչուելի մը մէջ Օսմանեան կառավարութեան դէմ խօսքերը բաժնի լինելով, Բ. Դուռն հրաման ըրաւ Ալեքս փաշային որ զանոնք իրենց պաշտօնէն հանէ և երկրէն վըռւնտէ։ Բայց Ալեքս փաշան իւր պատասխանին մէջ յիշեալ սպայից յանցանքը ծածկել ու թուծեցնել ջանացած լինելով, Բ. Դուռն այս գործին վրայ փիլիսոփայ Եւրոպական յանձնարմբն ուշադրութիւնն հրաւիրած և կարգադրութիւնն աւսոր յանձնած է։

Այսօրի կուտակալ Համալի փաշային հրամանաւ նահանգին ոստիկանաց վրայ 300 ոստիկան տուրջաւ։

Մայրաքաղաքի Մօնիթէօր Տիւ Բօմբէյ լրագիրն իւր երէկուան թրուով խմբագրական յօդուած մը հրատարակած է, որոյ մէջ հետեւեալ հատուածը կը տեսնուի։

« Երբեք և չի Անգլո-Թուրք դաշնագրին մէջ Անգլիոյ պայմանագրած բարենորոգումները գործադրելու կըսելու վրայ են, և ամենէն առաջ երկմտից պաշտօնատան մէջ պիտի իրականացուին։ Անգլիական դեսպանին յանձնարարման վրայ, Դուռն յայտնեց թէ երկուստեան հսկող տեսուհներ անուանելու միտք ունի, որք երկրորդ պիտի պտըտին, գաւառաց հաշուաւարներուն կողմանէ իրենց ներկայելիք տուժանքները պիտի քննեն, և այս նիւթիս՝ ինչպէս նաև տնտեսական ուրիշ խնդրոց վրայ տեղեկագիր մը պիտի շինեն։ Բոլոր դեսպաններէն պիտի խնդրուի, որ այս պաշտօնը կատարելիք անձներն անուանեն։ Այս նախաձեռն համարձակապէս մեր գաղափարը չեմք կըրնար յայտնել, միայն կըսեմք որ եթէ Թուրքիա չկրնար ինքզինք բարեկարգել առանց այս կամ այն պարունելու օգնութեան, որք կը լըսեմք թէ այս պաշտօնը կատարելու պիտի կոչուին, չեմք յուսար որ յաջողի պէտք եղած բարենորոգումները գործադրել։ »

Թէհրանէն սեպտ. 1 թուականաւ քաշուած Ռուսիոյ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պարսկական կառավարութիւնը Թէհրանի Օսմանեան դեսպանատան յայտարարած է որ Թուրք-Պարսկական սահմանադրական վրայ Բեքմանշահ քաղաքին մէջ իւր թէ ժամտախտ երեւան եղած լինելուն նկատմամբ Օսմանեան կառավարութեան առողջապահական պաշտօնատարաց կողմանէ Կ. Պոլիս զըրկուած լուրերն անհիմն են։ Ոչ ոսհ

մանագլխին վրայ և ոչ ալ Պարսկաստանի որ և է կղմը ժամտախտի հետքն անգամ չկայ։

Վաղըթ իւր այս առուր թուով հետեւեալ տեղեկութիւնները կուտայ։
Եանպօլու և Գըղը աղաճի մահ-մեմատական գաղթականք յիշեալ քաղաքները վերադառնալու համար Ալեքս փաշայէն հրաման տուելով երկաթուղի կը նստին, բայց Եանպօլուի կայարանին մէջ 300ի չափ Պուլղար յիշեալ գաղթականաց վրայ յարձակելուն պատճառաւ, կառախումբ ընէ եւ երթալ կ'ստիպուի։ Նոյն միջոցին տեղւոյն հազարապետը վրայ գալով՝ Պուլղարները կը յրուէ, Հետեւեալ օրը նոյն գաղթականաց վրայ 200ի չափ Պուլղար կանայք կը յարձակին, բայց չեն կրնար տնոնց նստած տեղերը մտնել, և այդ կանայքն ալ յրուելու համար հազարապետին միջամտութիւնն հարկ կը լինի։ Այս եղելութեանց վրայ, Եանպօլու և Գըղը Աղաճի մահմետականաց երեւելիները բողբոջաբար մը զըրկեցին առաջին նախարար Արիֆի փաշային։

Սթամբուլ լրագիրը կը ծանուցանէ թէ մայրաքաղաքի Բուրիէ տ'Օրիան լրագրին Տնօրէն-Խմբագիր Պ. Ճիւսիէթի Պուլղարական կառավարութեան կողմանէ իրեն եղած առաջարկութեան համեմատ Սօֆիայի մէջ Գաղղիներէն և Պուլղարներէն պաշտօնական թերթ մը հիմնելու համար Սօֆիա դնացեր է։

Փիլիպպի լրագիր մը կը ծանուցանէ թաթար-Պաղարճը Պուլղարք իւլամաց թոյլ չեն տար մզկիթներու միւնարները լուսավառել, ինչպէս որ սովորութիւն է Բամազանի ժամանակ, և մինչև անգամ, կախուած կանդեղները քար նետելով կոտորել են։ Թաթար-Պաղարճը Պուլղարք աւելի յառաջ երթալով, Բամազանին երկրորդ օրը տեղւոյն փերի Պէյ ճամփայի անուն մզկիթն այրել են։

Երկուշաբթիէն երեքշաբթի լուսնալու գիշերը Պաղարճի Բուռնաց Հրեշտակապետ եկեղեցին գող մտնելով, եկեղեցական զարդուց մէկ մասն և 60 տիւնայ չափ դուռն մը գողցան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ա Ս Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Կրէկ իրիկուն գողուեցաւ	12,22
Այս առաւօտ բացուեցաւ	12,17
Կէս օրին	12,19
Բուռնի երկաթուղի	Փր. 44,25
Թղթադրամ	Ժր. 800
ԸՆԹԱՅԻՆ ԱՐՅԱՆՈՒԹՅՈՒՆ	
22 Օգոստոս	
Սոսիթի Ժէնէրալ Բաժ. Անգլ. Իւր.	4,25
» Բրիտանական	3,10
Կ. Պոլսոյ Պանքային	3,25
Քրէտի Ժէնէրալ	4, 2
Փոխ. 1863	Ֆր. —
» 1865	70
» 1869	67
» 1872	21
» 1873	62 20
Թրամուսյ	Օտ. Իւր. 3 90

ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՄՈՅ

23 Օգոստոս	
Անգլ. Իւր.	22
Նարոյն Եանպօլու	87 25
Կրէկ Իւր.	90 5
Գըղը	51 20
Մէճիտիկ տարբերութիւն	6 20
Հիւնդոյ	19 20
Մէթոլիք	17
Պիլիք	495

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երկրորդական Համագումար Ժողովուրդի Պատրիարքարան գումարաւորով Կրօնական Ժողովէն պահանջ երեք անգամայ տեղ նոր ընտրութիւն կատարուելու համար ընտրելու եւս եռապատիկ ցանկ մը պատրաստեց :

Երրուստից մայր Գումարի Պատրիարքն երեկ Գումարաւոր մեր աղապին Երրուստից մատուցեց երկուսով փոխադարձ այցելութիւն տուաւ Գեր. Սիմէօն օրադասին :

Մշտն Ե. Կարապետի վանահայր Գեր. Մամբէն եպիսկոպոսն հետեւեալ խնդրագիրը մատուց Ե. Պատրիարքին .

Ամենապատիւ Սրբազան Հայր .

Վանքէն յուլիս 30 թուով առ մեզ հասած նամակներն միջոցիս Տիգրանակերտի կուսակալութենէն հաղարպետի մ'երկու հարկը զօրօք վանքն կողպարող Կնճան խմայիլ բէկի վրայ դրուելնին և տէրութեան անվար մտացած արդց հաւաքման հետ վանուցս աւարն ալ յետ առնելու աշխատելնին ծանուցանելով կը յաւելուն ծանուցանել նաեւ թէ Մշտն կառավարութիւնն ալ իր կողմէն խանութիւն միւլակրութեան մուսովին Կարապետիկեան Մեծ Թագէտու Եփէնտին փութացուցած է անգը, որ վանքի մէջ ուսումն առած լինելով իր աղգասիրութեամբն և ուսումնաւորութեամբն սիրելի է երկրին մէջ . հետեւաբար վանքին հաւատարմով զաւակ գործով յուսալ կուտայ մեզ թէ իր բնածիր յաջողակութեամբն և ջանքին վանուց աւարներու գիւմաց անտարակոյս դռնացուցիչ փութարկութիւններ կրնայ ձեռք բերել : Վանքէն ալ աւարներու ցուցակն և մարդ ուղբերուն համար Պարոն Աւետիս հաւատարմով գործակալն զրկուած է : Ասանք Հայր Սրբազան , յայտնի է՝ որ քանի ժամանակէ ի վեր Ձեր աղգանքնամ Սրբապետութեան ձեռք առած միջոցայ և ջանքի արդիւնքն են . սակայն կիւմացներն թէ հաղարպետի հետ գրտնուող Լճեցի Ստատուլահ բէկի եղբայրն՝ որ խնամի է Կնճան խմայիլ բէկին , պաշտպան կը կանգնի եղբր բարբառակց և իւր արքանեկաց . վանորդի կը փութամ խնդրել Ձեր Սրբապետութենէն , որ շնորհ բերէք սոյն պատեհ միջոցին հրամանագիր մը հանել տալ առ նոյն կուսակալութիւնն կամ առ կայսերական քննիչըն՝ որպէս զի Կնճէն այդ վայրերն Կնճ խմայիլ բէկն և իւր եղբորդի Եփ. Օմարանցեաց և Սոյապեաց գըլխաւորներն Պոկլանէն Ապապ և իւր եղբայր Մահմուտ աղաներն իրենց պարագայիւք և մանաւանդ Կուսուսէն վանքն կողպարող Եկամուտ Օսմանի տունն հանուին հեռացուցուին այդ վայրերէն , ապա թէ ոչ թէ որ ատենք անպատիւ իրենց տեղը կենան , ոչ վանքէն իր կենսակէս յետ առած աւարներէն բան մի ձեռք բերած կրնայ համարուիլ . քանի որ վերջէն մէկին տեղ տան պիտի տայ , ոչ Մշտն գաշտի արեւմտեան լեռնաստորոտ Հայ գիւղորդայ ատենց ասպատակութիւններէն աղատ պիտի կըրնան մնալ , ոչ ի Պոկլան , ի Սոյապապ , ի Սարապա , և ի Մանաշլու զաւաւսն բնակեալ գերի Հայերն իրենց մէ յաջողակութեամբ հողային կալուածներն , իրենց ընտանեկան պատիւն , իրենց կործանեալ և արծեալ եկե-

ղեցիքն յիշեալ Ապապ աղայի և իւրայնոց գաղանային հիշանկներէն պիտի կրնան ազատել և ոչ ալ վերջապէս երթեկեկաց առջեւ փակուած Տիգրանակերտի , Բաղուի և ճաղագղայ ճանապարհներէն պիտի կրնան բաց մնալ , որոց վրայ այդ բարբառութիւնը դարանեալ շարունակ անցորդքն կողպարող և սպանելով կապըն , և որք տէրութեան զօրաց անգամ այս բաներն ըրին պատեհազմի ժամանակ :

Կուսակալութիւնն՝ իմէ ոչ վտանապահութեան օգորմելի հպատակաց , գրեմէ վանքի տէրութեան պէտք է որ վերցնէ այդ բարբառութեան , որք տէրութեան սուրբ և զինուոր չտալէ զինի՝ ապաստանաւորան եղած են ուրիշ կողմանց մարդապաններն , աւաղակներն և զինուորագրութիւնէն փախուստ տուողներն թանձրայնել իրենց մէջ , և հարկադրել զտէրութիւնն որ սուրբքերն և նոր զինուորութեան կանչուողներն զօրաց դուռեքելով հաւաքէ այդանիշխան թողուած վայրերէն : Երկու հարկը զօրօք նուաճելի տեղ մը անիշխան թողնելն ալ ոչ սակաւ զարմանալու բան է :

Ձերդ Ամենապատիւ Սրբազան 1879 օգոստ 18 նուրեան աղօթարար Եր. Գիւղի Կ. Պոկլայ Մամբէն Եփէնտին Ս. Կարապետի վանուց Մշտն

Թ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Մ. Ա. Յ. Ի. Ն. Մ. Ա. Յ. Ի. Ն.

Ձմեռնիս 11/25 օգոստ .

... Խաբաղի .

Ամսոյ 3/20ին չորեքշաբթի օրն առաւօտու կանուխ խոտական չոգենաւր մայրաքաղաքէ գալով Ձմեռնիոյ առջեւ խաբիս նետեց . Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն զանգակները հնչեցին՝ քաղաքիս արժանաւոր աւաղներ Գեր. Մ. Մուրատեանց նորապալի եպիսկոպոսին զարուստ աւետելով . Ազգ. Ժողովներու պատուարժան անդամներէն ոմանք , ինչպէս նաեւ ժողովրդեան խուռն բազմութիւն մը ծովափն երթալով Նորին Գերապատեութիւնը զիմաւորեցին և ժամէ մ'ետքը Հ. Մուրատեանց Սարգիսեան Մեծաշուք Յակոբ Եփէնտինի օրդույն հետ անոր կողքը նստած եկեղեցւոյն մօտեցաւ , ուրիշ կրօնական արարողութեամբ եկեղեցին առաջնորդուելով իւր սրբանուէր ուխտը կատարեց և ժողովրդեան իւր հայրենասիրական օրհնութիւնները տուաւ :

Գարստեան լուրը տարածուելով , ամեն կողմէն սրտեղբայր Նորին Գերապատեութեան պոգելով , ինչպէս Յունաց և Կաթողիկոսեան կրօնական զուգաներն , որք անտարակոյս այս անգամ իրենց արժանաւոր պատուով ընդունուեցան . . . :

Ուրախ ենք որ այսուհետեւ դարձեալ մեր յուսման առաջնորդ պիտի նստաւ , զանչ ազգային ժողովներու , իւր փորձառու և խոհական խորհուրդներն ուղեցոյց տալով ժողովականաց : Նոյնպէս յուսալի է որ Նորին Գերապատեութիւնը իրեն յառաջիկութեան զինուոր և ազգային բարոյական շահուն և պատուոյն նախանշանները՝ զաղոցական ծանր ու ամենակարեւոր խնդիրը լաւ մը կը տընորին , յօգուտ ազգային ասպազայ սեւընդին :

Մնամ . . .

Ա. ՐԱՆԵՆ

Սերաստիս 8/20 օգոստ 79

Ազգիս Մարիս .

Նախորդ մի նամակաւ գաւառիս կուսակալ Վ. Սեմ. Սիւրէյա փաշային յօգացաւ (սխալմիտով) վտանգաւոր կերպով բռնուելով ծանուցի : Այժմ ևս տըրաւութեամբ կը ծանուցանեմ որ ամսոյ 3ին կիրակի օր իւր մահկանացուն կը բաց բուր ժողովները՝ մանաւորապէս քաղաքիս Հայերը վերա և արտութեամբ համակրելով :

Յաջորդ օրը (օգոստ 6) Ն. Վ. Սեմ. թեան թողման տարալի հանդէսը կատարեցաւ խիստ փառատուր և շքեղ կերպով ժամէ հին ատենները . Հանդիսին կատարմանն առաջ կուսակալին օրդին , Նիկիոյ պէյ , որ մի զիմաւոր և ազատամիտ երիտասարդ է , Անդրկական հիւպատոս Պ. Ռ. Սիւրէյ , Ամերիկացի Միւսիօնարին և քաղաքիս ուսումնական Հասցիական Նիկիոյ դատուելու համար :

Ժամը 5 1/2 էր , բոլոր հրաւիրեալք և բոլոր ազգաց մեծամեծք՝ արքունի և մարտնոց (ուր դրուած էր կուսակալի մարմինը) երթալով քիչ մը հանդիստաւանելէն վերջ , բաղնիքի դօրաց և խոնեալ բազմութեան մը հետ մարմինն՝ որ ծանրազին կահերով կահաւորեալ մի դադաղի մէջ դրուած էր , առին և զինուորական նուաղածուներուն հետ ժամը 4ին կառավարութեան պաշտօնարանին կից Յէյդուլահ փաշայի գերեզմանատեղին ամփոխեցին :

Ն. Վ. Սեմ. թեան անդրեւոյն նկատմամբ կը բաւականամբ ըսել թէ ինքն թէ և ազատական և երկրին բարեօրոնս ճշմարիտ կամք և բաղձանք ունեցող անձ մ'էր , բայց քաղաքիս քանչաճ վարչատէր թուրք ժողովականներու և Տէրէպէյին երու (քիչ բացառութեամբ) խոշն ուխտին նորա բոլոր ջանքն ի գերեւ հանին . . .

Բաւական ժամանակէ ի վեր , Ռուսական պետութեան նոր տիրած երկրներէն մահմեդական զաղթականներ խաւիս խուսի Սերաստիս կողմէն և դաւառիս մէջ կը հաստատուին , թշուառ Հայոց ունեցած վիշտերն ու զրկանքն աւելի ևս բաւականաւոր նպատակաւ : Խեղճ ժողովրդեան ձեռքը դանուած ախ մի հողն ալ՝ եթէ չեմք սխալի իւրեքեք՝ սորա պիտի իւրացնեն : Այս մի նոր պատուհաս ևս երկրին . . . :

Հաճեցէք ընդունիլ մեծ արտնայն հաւատարմ .

Ն. Յ. Խաբաղի .

Վան 21 յուլիս 1879

... Խաբաղի .

Մեր Խնամատար ընկերութեան սառնարն չկրնալով այլ ևս լաւ մեղ եղած բազմաթիւ շնորհները տեսնելով , կը փութանք մեր սրտից ջերմանքով զգացումներն ազգուստ թերթի միջոցաւ մեր վեհանքն բարեբարաց առաջ թափել :

Երբ Վանեցիք հազարներով կը հանդանակեն ի նպատակ զմեզ խնամող ընկերութեան , հեռաւորակ Հայք ևս չեն ուշանար քաջալերել նոյն ընկերութիւնը վեհանքն արտաւանդներով : Գեր նոր էր յօգուտ մեր՝ Գաղթեալ Թատերական ընկերութեան Փաշապետ հայրենասէր Մեսրոպ քահանայի արհեստավարութեամբ թատերական ներկայացումներ տալը . Տըլի խիսեցեաց 25 1/2 բուրի դուրս մը հանգանակել և Փորձի ազգասիր խումրադութեան 300 օրինակ «Ազատ երգեր» նուիրելը , երբ ուրախութեամբ ի մացանք թէ Գաղթապարագա՝ Արեւելեան մեծանուն ընկերութիւնն ալ 13 օրինակ Աշխարհադրութիւն կը նուիրէ : Այս գործերը իրենց հեղինակներուն ուղեւ մեծութեան նոր և փառաւոր յատկանիշներ ներկայելէ ի դատ , այլոց առաջ ևս յօգուտ վանայ որոյց և աղքատիկ մանկանց նուիրելու դուռ մը բանալով՝ յոյս կուտան թէ Խնամատար ընկերութիւնը շուտով պիտի յաջողի երկուստ օրհանոց մը բանալ Վանայ մէջ :

Մենք որ քանի մ'ամիս առաջ մուցուած և տղէս արարածներ էինք , տեսնելով այսօր մերձաւորաց և հեռաւորաց առ մեղ ցուցած այսչափ զուլ և շնորհ , զժամը ի դրախտ փոխադրուած զիւսեմը զմեզ , և թէ այժմէն ինչ սրբազան ուխտեր կընեմք մեր մարքերու մէջ , ապաղայն պիտի զիտնայ զայն :

Վեհանքն բարեբար մ'ալ ունիմք , աղիւ խմբադիր , որոյ անունը մեր սրտի և մարքի մէջ դրուած է : Խորմեան հայրենասէր Հայրիկն է դա , որ իւր վեհ գործոց օրապարգին մէջ հաճութեամբ նըշանակած է նաեւ Վասպուրականի որոց և սղբատիկ անիւնց զատարարակութեան խնդիրը , Հայրիկ ամբողջ Հայաս-

տանի փրկութիւն խորհած ատեն , չէ մոռնար նաեւ այն բազմաթիւ խեղճ մանկիկներն , որոց երբեմն մեք վեհակալից էինք , և որք դեռ անխնամ մնացած լինելով՝ արդ զմեզ առնած ատեն անկողնաւոր հառաչներ կարճակեն և դառն արտասուք կը թափեն , և զոտա թշուառութեան ու աղիտութեան ու խաւարէն ի ըստ առաջնորդելու համար՝ իւր մեծ անուան արժանաւորել նոր գործերու ալ ձեռնարկելու միջոց կը գտնէ : Ռեւմի Խորմեան այս նոր ձեռնարկով իւր թանկազին կեանքն անմահացնող մի նոր յիշատակ ևս պիտի յաւելու :

Ազնիւ խմբադիր , հաճեցէք մեր սոյն երկառոյն մեր աղգողնութեամբ մէջ մի անկիւն շնորհել , ընդունելով մեր խորին շնորհակալութիւնը :

Մնամ . . .

Խնամատար ընկերութեան

Խնամք Ստեփան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՐԱՆ

Տնօրէնութիւնն պատիւ ունի ծառայանել թէ Հայկական երթարանն վերահաստատուած է յօրթաքէյ փիլիսոփայ—ճատաւիս փողոց թիւ 56 տունն , որ իւր ընդ արձակութեանն և հոգատուն գրից կողմանէ յարմարագոյն է գիշերօթիկ վարժարանի :

Աշակերտաց վերամուտն կը սկսի օգոստ 20 երկուշաբթի օրէն , և դաւախօսութիւնք յաջորդ երկուշաբթի :

Կրթարանին սոյն Գ. տարւոյ չըրջման պիտի սկսի հարկաւոր դատուած բարեկարգութեամբ և ուսմանց յայտադրին անթերի դործադրութեամբն ըստ անոնցն :

Աշակերտ տալ փափաքողն կը հրաւիրուի տեսակցել Տնօրէնութեան հետ ի Հայկական երթարան : ամէն օր , կէս օրէն առաջ :

10 օգոստ 1879 Հիմնադիր-Տնօրէն Յ. Գրեգէ

Ա. Զ. Գ.

Հայոց հեաց Ազգաստեղ բնակրութեան Ընդհանուր Ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրախ , օգոստ 24 Սէլամիյէ թաղի վարժարանին թատրոնը :

Ի Լ Ա Ն

Նիդամիյէ անպարը իլէ խախալը ամիրէ լաղրմէսի իւրն երկուս պինքիլէ Գըլըրմա հանթա վէ էլի պինքիլէ շայիլ միւրայեա օրուանաղըն տան վէ քաղաքը գալթիսի կիւնի տախի պաշաճաւ իլան բըլընաճաղըն տան իլթաւընա թալիլ օրանլարըն շէրայիլթինի անլայիլ բէյ սիւրմէք իւղրէ իւղու աղօթթօս բումինին ի կիրմի պէշիննի ճուսմ իրթէսի կիւնիւն քառար մալիյէ խաղինէյի ճէլիլէսինաւ աչար նէղարէլթի տայիլէսի սինէ միւրաճաւթ իլլէմէլէրի :

20 աղօթթօս 1879

Պապը Սէրասքէրի

Նիդամիյէ քեօմիլը անպարընա շուրթթը միւրաբարէսի իլէ միւրայեա խաղինէք իւլ էրիլ պին գըլէ Սիլիլիլ վէ ճիլալը Մէշէ քեօմիլընին սիւ մէճիլիլէ իկիլմիլ զըշ հիսապը իլէ պէհէր երկ գըլէսի օթուղ եէտի զըա թալիլիլ էօհտէսինաւ օրուա աղօթթօս բումինին ի կիրմի պէշիննի ճուսմ իրթէսի կիւնի թէքրար միւրադաւապը ինրա օրանաճաղընտան , իթայէ թալիլ օրանլարըն եէվմի մէղքիւրաէ ճարը Շուրայիլ տաքէրիլէ կէլմէլէրի :

20 աղօթթօս 1879

Պապը Սէրասքէրի

Ա-Է-Կ-Է-Է-Դ-Ե-Գ

1	30	Իւսկ, Գուգ, Պէյլ, Չէնկ, Վանկը, Գանտ, Ա. Հիսար, 21
		Գանլ, Բաշապ, Պէյթօզ :
3		Իւսկ, Գուգի, Պէյլէրոյ, Չէնկ, Վանկը, Գանտ, Ա. Հիսար, Գանլըճա, Բաշապ, Պէյթօզ :
9		Գուգի, Պէյլէր, Չէնկէլ, Վանկը, Գանտ, Ա. Հիսար, 23
		Գանլըճ, Բաշապ, Պէյթօզ, Թարապ, Պէյթիքտ.
		(Բաղի ուրբաթ) :
9	45	Գուգի, Պէյլէրոյ, Չէնկ, Վանկը, Գանտ, Ա. Հիսար, 17
		Գանլ, Բաշապ, Պէյթօզ, Սէլապոյ, Ի. Է. Գալապ :
10	30	Գապաթ, Վանկը, Գանտ, Ա. Հիսար, Գանլ, 24
		սլուգու, Բաշ. Պէյթօզ :
		(Ուրբաթ օրերը Գուգի, Պէյլ, Չէնկ.)
11	45	Գուգի, Պէյլ, Չէնկ, Վանկը, Գանտ, Ա. Հիսար, 19
		Գանլ, Բաշապ, Պէյթօզ :
11	30	Գապաթ, Գուգի, Պէյլ, Չէնկ, Վանկը, Սրնապ, 4